# Մաստրիխի կոմյունիկե

նվիրված մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտում եվրոպական ընդլայնված համագործակցության հետագա գերակայություններին

Directorate-General for Education and Culture

դեկտեմբեր 14, 2004թ.

**Մաստրիխի կոմյունիկե**

**նվիրված մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտում եվրոպական ընդլայնված համագործակցության հետագա գերակայություններին**

**(2002թ. նոյեմբերի 30-ի Կոպենհագենյան հռչակագրի վերանայված տարբերակ)**

2004թ. դեկտեմբերի 14-ին Մաստրիխում 32 եվրոպական երկրների մասնագիտական կրթության և ուսուցման համար պատասխանատու նախարարները[1], եվրոպական սոցիալական գործընկերներն ու Եվրոպական Հանձնաժողովը համաձայնության եկան ապրապնդելու իրենց համագործակցությունը, նպատակ ունենալով՝

– արդիականացնել մասնագիտական կրթության և ուսուցման համակարգերը, որպեսզի Եվրոպան ունենա ամենամրցունակ տնտեսությունը,

– բոլոր եվրոպացիներին, անկախ այն հանգամանքից, թե նրանք երիտասարդ են, տարեց աշխատողներ, գործազուրկ կամ կարիքավոր են, առաջարկել որակավորումներ և հմտություններ, որոնք վերջիններիս անհրաժեշտ կլինեն գիտելիքների շարունակական զարգացման վրա հիմնված հասարակության մեջ լիովին ինտեգրվելու համար, միաժամանակ նպաստելով ավելի շատ ու ավելի լավ աշխատեղերի ստեղծմանը:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ ԵՎ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ

2002թ. նոյեմբերի 12-ին Խորհուրդը (Կրթության, երտասարդության և մշակույթի) ընդունեց Որոշում[i] ՝ մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում եվրոպական ընդլայնված համագործակցության խթանման վերաբերյալ, որն այնուհետև հաստատվեց ԵՄ անդամ երկրների, EFTA/EEA ու թեկնածու երկրների (մասնակից երկրների) մասնագիտական կրթության և ուսուցման համար պատասխանատու նախարարների, Եվրոպական Հանձնաժողովի ու եվրոպական սոցիալական գործընկերների 2002թ. նոյեմբերի 29-30-ին Կոպենհագենում կայացած հանդիպման

[1] 25 ԵՄ երկրներից, ինչպես նաև 4 թեկնածու և 3 EFTA/EEA երկրներից (այսինքն՝ նույն երկրներից, որոնք Կոպենհագենում էին, ինչպես նաև Խորվաթիան):

ժամանակ, որպես ՄԿՈՒ-ի արդյունավետությունը, որակը և գրավչությունն ամրապնդելու ռազմավարություն (Կոպենհագենյան հռչակագիր):

Խորհրդի և Հանձնաժողովի *«Կրթություն և ուսուցում 2010»* միասնական միջանկյալ հաշվետվության[ii] մեջ Եվրոպայի Խորհուրդը համառոտ ներկայացնում է Կոպենհագենյան գործընթացի մինչև 2004թ. գարունն արձանագրված առաջին կոնկրետ արդյունքները, ինչպես նաև կարևորում վերջինիս դերը բարեփոխումների խթանման, հարատև կրթության աջակցման և գլխավոր դերակատարների ու երկրների միջև փոխադարձ վստահության զարգացման գործում:

Միջանկյալ հաշվետվությունն առաջարկում է մշակել եվրոպական ընդհանուր տեղեկատվական աղբյուրներ և սկզբունքներ, որոնք հետագայում կիրականացվեն ազգային մակարդակում՝ հաշվի առնելով տեղական իրավիճակն ու հարգելով ազգային կարողությունները: 2002թ. նոյեմբերից ի վեր, Խորհուրդը ձեռք է բերել քաղաքական համաձայնություն մի շարք կոնկրետ արդյունքների վերաբերյալ, որոնք բխում են ՄԿՈՒ ոլորտում ամրագրված համագործակցությունից և ցկյանս կրթությունից, հատկապես, հասարակական միասնականության ու մրցունակության համար անհրաժեշտ մարդկային կապիտալի[iii], ողջ կյանքի ընթացքում կողմնորոշման[iv], ինֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ճանաչման ու վավերացման սկզբունքների[v], ՄԿՈՒ ոլորտում որակի հաստատման[vi] և որակավորումների ու կարողությունների թափանցիկության «Europass» միասնական շրջանակի հետ կապված:

2002թ. փետրվարին եվրոպական սոցիալական գործընկերներն արձանագրեցին համագործակցության գործընթացի մեկնարկը՝ ընդունելով ողջ կյանքի ընթացքում կարողությունների և որակավորումների զարգացման գործողությունների Շրջանակ[vii]: Ամենամյա հաշվետվությունների միջոցով գործատուներն ու արհմիությունները զգալի աջակցություն են ցուցաբերում Լիսաբոնյան ռազմավարությանը:

Երկամյա ժամանակահատվածում Կոպենհագենյան գործընթացին հաջողվել է եվրոպական մակարդակում և Լիսաբոնյան ռազմավարության մեջ բարձրացնել ՄԿՈՒ-ի դերն ու էությունը: Մասնակից երկրներն ու շահառուները համաձայնության են եկել առանձնահատուկ մարտահրավերների առկայության և այդ մարտահրավերներին

դիմակայելու համար անհրաժեշտ ռազմավարությունների վերաբերյալ՝ մշակելով կոնկրետ միջոցառումներ դրանց իրականացմանն աջակցելու նպատակով:

## ԼԻՍԱԲՈՆՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

*«Կրթություն և ուսուցում 2010»* աշխատանքային ծրագրի համատեքստում, Կոպենհագենյան գործընթացը շարունակելու է որոշել քաղաքական գերակայությունները՝ ՄԿՈՒ ոլորտում Լիսաբոնյան հիմնախնդիրների լուծման նպատակով: Կամավոր և ներքևից - վերև համագործակցության միջոցով եվրոպական և ազգային մակարդակներում ՄԿՈՒ հզորացումը՝ մասնագիտական որակավորումների ճանաչման և Ձբաղվածության եվրոպական ռազմավարության համար ստեղծված օրենսդրական դաշտի հետ մեկտեղ, պետք է հանդիսանա իրական եվրոպական աշխատաշուկայի և մրցունակ տնտեսության ստեղծման կարևոր բաղադրիչ: Այնուամենայնիվ, պետք է գլխավորապես կարևորել ազգային մակարդակում համաձայնեցված հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ գործողությունները՝ հաշվի առնելով եվրոպական համընդհանուր տեղեկատվական աղբյուրներն ու սկզբունքները: 2005-2006թթ. Կոպենհագենյան գործընթացի թիրախը վերանայելիս՝ լիովին հաշվի են առնվել ՄԿՈՒ համակարգերի առաջընթացը գնահատող Եվրոպական Հանձնաժողովի նախաձեռնությամբ իրականացված ուսումնասիրության[viii] մեջ, ինչպես նաև Կոկի 2003թ.[ix] և 2004թ.[x] հաշվետվություններում նշված մարտահրավերները: Այդ մարտահրավերները ներառում են աշխատաշուկայում շարունակականաբար դրսևորվող փոփոխությունները, որոնք իրենց անմիջական ազդեցությունն են թողնում ՄԿՈՒ ոլորտում տեղի ունեցող զարգացումների վրա:

Նպատակ ունենալով, որպեսզի մինչև 2010թ. եվրոպական կրթության և ուսուցման համակարգերն ամբողջ աշխարհի համար ծառայեն որակի չափանիշ, իսկ ցկյանս կրթությունը՝ կոնկրետ իրականություն բոլորի համար, Միասնական միջանկյալ հաշվետվությունն առանձնացնում է գլխավոր ոլորտներում բարեփոխումների իրականացման մի շարք մակարդակներ և գերակայություններ: Սրանց մեջ մտնում են անհրաժեշտ ներդրումների արդյունավետ կենտրոնացումը և ողջ կյանքի ընթացքում քաղաքացիների հիմնական կարողությունների զարգացման վրա ուշադրության

բևեռումը, որպիսիք են. սովորել կրթվել, նորացնել և զարգացնել ձեռնարկատիրության ոգին:

Անհրաժեշտ բարեփոխումները և ներդրումները հատկապես պետք է նպատակ ունենան.

- գործատուների և անհատների համար ամրապնդել այս կամ այն մասնագիտական ուղու գրավչությունը՝ ՄԿՈՒ ոլորտում մասնակցությունը խթանելու նպատակով.
- ՄԿՈՒ համակարգերում ապահովել որակի և նորարարության բարձր մակարդակ, ինչի արդյունքում կշահեն բոլոր սովորողները, իսկ եվրոպական ՄԿՈՒ համակարգը կդառնա մրցունակ ամբողջ աշխարհում.
- խթանել, որպեսզի ՄԿՈՒ-ն համապատասխանի որակյալ և բանիմաց աշխատուժի նկատմամբ աշխատաշուկայի պահանջներին, հատկապես, ժողովրդագրական փոփոխությունների խիստ ազդեցությունից կախված՝ բարելավի և զարգացնի ոչ երիտասարդ աշխատողների կարողությունները.
- հաշվի առնել ոչ բավարար հմտություններ ունեցողների (ԵՄ-ում՝ 25-64 տարեկան մոտ 80 միլիոն մարդու) և անապահով խմբերի կարիքները՝ նպատակ ունենալով հասնել հասարակության միասնականությանն ու խթանել նրանց մասնակցությունն աշխատաշուկային:

ՄԿՈՒ-ն շարունակաբար իրականացվում է կրթական բոլոր մակարդակներում, հետևաբար անհրաժեշտ է որդեգրել հավասար վերաբերմունք ՄԿՈՒ - հանրակրթություն, առավել ևս՝ ՄԿՈՒ - բարձրագույն կրթություն կապերի որպես ազգային և եվրոպական մակարդակներում նորարարական ռազմավարությունների և գործիքների նկատմամբ: Վերջինս պետք է ներառի այնպիսի ՄԿՈՒ համակարգերի մշակումը, որոնք ավելի բարձր որակավորումները կդարձնեն գրավիչ անհամեմատ ավելի շատ ուսանողների համար: Դա կնպաստի նորարարության և մրցունակության զարգացմանը:

## ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ. ԼԻՍԱԲՈՆՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՄԿՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ, ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ԴԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ[xi]

**ԳԵՐԱԿԱ ՊԵՏՔ Է ՀԱՄԱՐԵԼ ՀԵՏԵՎՅԱԼԸ.**

ա) ՄԿՈՒ համակարգերի և փորձի զարգացումն ու բարեփոխումը խթանելու նպատակով՝ ընդհանուր գործիքների, տեղեկատվական աղբյուրների և սկզբունքների կիրառում. օրինակ՝ թափանցիկության (Europass), ողջ կյանքի ընթացքում կողմնորոշման, որակի վերահսկման, ինչպես նաև ներունակ (ինֆորմալ) և ոչ ֆորմալ կրթության ճանաչման և վավերացման առնչությամբ: Այն պետք է ներառի այդ գործիքների փոխադարձ կապը, ինչպես նաև անդամ երկրների ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում շահառուների գիտակցության ամրապնդումը՝ թափանցիկությունն ու և փոխըմբռնումն ամրապնդելու նպատակով:

բ) ՄԿՈՒ ոլորտում հասարակական և/կամ անհատական ներդրումների բարելավումը, ներառյալ՝ հասարակություն-անհատ գործընկերությունների և ըստ անհրաժեշտության՝ «հարկային ու եկամուտների համակարգերին խթանող ազդեցությունների վերաբերյալ ուսուցումը»[xii], ինչպես որ խորհուրդ է տրվում Լիսաբոնի Եվրոպական Խորհրդի կողմից:

գ) Եվրոպական հասարակական ֆոնդի և Եվրոպական տարածաշրջանային զարգացման ֆոնդի օգտագործումը՝ ՄԿՈՒ զարգացմանն աջակցելու նպատակով: Հետագա ԵՄ կառուցվածքային ֆոնդերի և 2007-2013թթ. ընթացքում այդ ֆոնդերի քաղաքականության ուղղվածության համաձայն, դրանք պետք է խթանեն տնտեսական զարգացման ու հասարակության միասնականության ամրապնդման գործում կրթության և ուսուցման գլխավոր դերը, ինչպես նաև «Կրթություն և ուսուցում 2010» հիմնախնդիրները, հատկապես, փոքր և միջին ձեռնարկությունների կարիքները, ՄԿՈՒ համակարգերի նորարարական բարեփոխումներն ու դրան հետևող մարտահրավերները, կապված, մի կողմից՝ երիտասարդներին իրենց ողջ կյանքի ընթացքում անհրաժեշտ հիմնական կարողություններով ապահովելու, մյուս կողմից՝ տարեց մարդկանց հմտությունները նորացնելու և արդիականացնելու հետ:

դ) ՄԿՈՒ համակարգերի հետագա զարգացումը, որի նպատակն է աշխատաշուկայից վտարվելու և հասարակությունից մեկուսանալու վտանգի առաջ կանգնած մարդկանց կամ խմբերի, հատկապես, ժամանակից շուտ դպրոցից հեռացած, ոչ բավարար հմտություններ ունեցողների, վտարանդիների, հաշմանդամների և գործազուրկների կարիքների բավարարումը: Այն պետք է հիմնված լինի նպատակային ներդրման, նախընթաց կրթության գնահատման, նպատակային կրթության և ուսուցման ապահովման վրա:

ե) ուսուցման նկատմամբ ազատ մոտեցման զարգացումն ու իրականացումը, որը մարդկանց հնարավորություն կտա որոշելու իրենց անհատական ուղին՝ միաժամանակ ապահովելով խորհրդատվություն և կողմնորոշում: Սրա հետ մեկտեղ, պետք է ստեղծել ՄԿՈՒ ճկուն և բաց շրջանակներ՝ ՄԿՈՒ և հանրակրթության միջև խոչընդոտների վերացման, նախնականից շարունակական ուսուցում և/կամ բարձրագույն կրթություն անցման համար: Բացի այդ, պետք է ձեռնարկվեն քայլեր՝ շարժունությունը նախնական և շարունակական ուսուցման մեջ ներառելու ուղղությամբ:

զ)ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակների զարգացումներում, հատկապես, որակի հաստատման հետ կապված՝ բոլոր գլխավոր դերակատարների մշտական ներգրավվածության միջոցով ՄԿՈՒ-ի դերի և որակի ամրապնդումը: Այդ նպատակով ՄԿՈՒ հաստատություններին պետք է հնարավորություն ընձեռել և քաջալերել համապատասխան գործընկերություններում իրենց մասնակցությունն ապահովելու համար: Առանձնապես կարևոր է ժամանակին որոշել անհրաժեշտ հմտությունները և պլանավորել ՄԿՈՒ ապահովումը, որում կարևոր դեր կունենան գլխավոր դերակատարները, այդ թվում՝ սոցիալական գործընկերները:

է) ուսուցում ապահովող հասատություններում և աշխատատեղում ուսուցմանը նպաստող միջավայրի հետագա զարգացումը: Վերջինս ենթադրում է մանկավարժական այնպիսի մոտեցումների ամրապնդում և իրականացում, որոնք խթանում են ինքնուրույն կազմակերպվող ուսուցումը, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների և էլեկտրոնային ուսուցման կիրառումը, որոնք առավելագույնս կնպաստեն ուսուցման որակի բարելավմանը:

ը) ՄԿՈՒ ոլորտում դասավանդողների և վերապատրաստողների կարողությունների շարունակական զարգացումը՝ հաշվի առնելով նրանց բնորոշ կրթական կարիքները և ՄԿՈՒ զարգացման արդյունքում վերջիններիս փոխվող դերը:

## ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ. ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ, ՈՐԱԿԻ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՈՐՈՆՑ ՆՊԱՏԱԿՆ Է ԽԹԱՆԵԼ ԻՍԿԱԿԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ [xiii]

### ԳԵՐԱԿԱ ՊԵՏՔ Է ՀԱՄԱՐԵԼ ՀԵՏԵՎՅԱԼԸ.

ա) Կոպենհագենյան գործընթացի գերակայությունների միավորում և կոնկրետ արդյունքների իրականացման խթանում:

բ) թափանցիկության և փոխադարձ վստահության վրա հիմնված, բաց և ճկուն Որակավորումների եվրոպական շրջանակի մշակում: Շրջանակը կխթանի ՄԿՈՒ և հանրակրթության (միջնակարգ և ավելի բարձր) որակավորումների ճանաչմանը և փոխանցելիությանը, որոնք գլխավորապես հիմնված կլինեն կարողությունների և կրթական արդյունքների վրա: Այն կբարելավի կրթության և ուսուցման համակարգերի թափանցիկությունը, հիմք կհանդիսանա ներունակ ճանապարհով ձեռք բերված կարողությունների հաստատման համար, կնպաստի Եվրոպական, ազգային ու ոլորտային աշխատաշուկաների հարթ և արդյունավետ գործունեությանը: Շրջանակը պետք է ամրագրված լինի մի շարք տեղեկատվական ընդհանուր մակարդակներով, ինչին պետք է նպաստեն նաև եվրոպական մակարդակում համաձայնեցված գործիքները, հատկապես, որակի ապահովման մեխանիզմները, որոնց նպատակն է փոխադարձ վստահության ստեղծումը: Շրջանակը պետք է խթանի եվրոպական մակարդակում կարողությունների վրա հիմնված լուծումների կամավոր մշակումը՝ ոլորտներին հնարավորություն տալով դիմակայել նոր կրթության և ուսուցման մարտահրավերներին՝ միջազգայնացված առևտրի և տեխնոլոգիաների հետևանքներին:

գ) Մասնագիտական և արհեստագործական կրթության եվրոպական կրեդիտային համակարգի (ECVET) մշակումը և իրականացումը: Դրա նպատակն է՝ կրթական

համակարգերի միջև տեղափոխվելիս, սովորողներին հնարավորություն տալ հիմնվել կրթության իրենց անցած ուղու ձեռքբերումների վրա: ECVET-ը հիմնված կլինի կարողությունների և կրթական արդյունքների վրա՝ հաշվի առնելով ազգային և ոլորտային մակարդակներում դրանց սահմանումը: Այն հաշվի կառնի բարձրագույն կրթության ոլորտում Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգի (ECTS) և Europass շրջանակի փորձը: Գործնական իրականացումը պետք է ներառի ամբողջ Եվրոպայում ՄԿՈՒ ապահովողների միջև կամավոր սկզբունքներով համաձայնության մշակումը: Համակարգը պետք է ընդգրկուն և ճկուն լինի, որը հնարավոր կդարձնի վերջինիս առաջընթացն ազգային մակարդակում՝ ամենից առաջ նախապատվությունը տալով կրթության ֆորմալ համակարգին:

դ) առանձնահատուկ կրթական կարիքների և մասնագիտական կրթություն դասավանդողների և վերապատրաստողների փոխված դերի, ինչպես նաև նրանց մասնագիտությունն ավելի գրավիչ դարձնելու հնարավորությունների ուսումնասիրությունը, ներառյալ՝ նրանց մասնագիտական հմտությունների շարունակական նորացումը: Հարկ է աջակցել դասավանդողներին և վերապատրաստողներին, որպես կրթական միջավայրում նորարարների և խթանողների՝ իրենց գլխավոր դերի իրականացման գործում: Անհրաժեշտ է ստեղծել տրամաբանական շրջանակ, որի նպատակն է՝ նպաստել մասնագիտական կրթության որակի բարելավմանը:

ե) ՄԿՈՒ վիճակագրությունն ավելի ընդգրկուն, կոնկրետ և վստահելի դարձնելը, որը հնարավորություն կտա գնահատել ՄԿՈՒ-ն արդյունավետ, արդյունավոր և գրավիչ դարձնելու գործընթացի առաջընթացը: Համապատասխան տվյալները և ցուցիչները հնարավորություն կընձեռեն հասկանալ, թե ինչ է տեղի ունենում ՄԿՈՒ ոլորտում, ներգրավված բոլոր կողմերը լրացուցիչ ինչպիսի միջամտություն պետք է ցուցաբերեն և/ կամ որոշումներ կայացնեն:

## ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

ա) ՄԿՈՒ ոլորտի բոլոր դերակատարներին՝ ՄԿՈՒ ապահովողներ, գործատուներ, արհմիություններ, մասնաճյուղային կազմակերպություններ, առևտրական պալատներ, արդյունաբերություն կամ արհեստագործություն,

զբաղվածության ծառայություններ, տարածաշրջանային մարմիններ, ցանցեր և այլն, առաջարկվում է ստանձնել իրենց պարտավորությունները և աջակցել բոլոր մակարդակներում Կոպենհագենյան գործընթացի իրականացումն արդյունավետ դարձնելու գործին: Հարկ է ստեղծել ազգային ցանցեր, որտեղ նախարարները, սոցիալական գործընկերները և տարածաշրջանային մարմինները կունենան իրենց ներկայացուցիչները:

բ) Միասնական միջանկյալ հաշվետվության համաձայն, կրթության և ուսուցման գործընթացները պետք է եվրոպական մակարդակում ավելի ռացիոնալ և նպատակաուղղված դարձվեն՝ վերոհիշյալ եզրակացությունների և Կոպենհագենյան գործընթացի գերակայությունները բերելով Կրթություն և ուսուցում 2010 աշխատանքային ծրագրի շրջանակի մեջ: Այն պետք է հիմնված լինի Կոպենհագենյան գործընթացի ներքո աշխատանքային մեթոդների փորձի վրա:

գ) Մասնագիտական ուսուցման Խորհրդատու հանձնաժողովը լիովին կներգրավվի իրականացման և վերահսկման գործընթացում:

դ) Անհրաժեշտ է մշակել և ուսումնասիրել առաջարկներ՝ Որակավորումների եվրոպական շրջանակի և Մասնագիտական կրթության և ուսուցման եվրոպական կրեդիտային համակարգի վերաբերյալ:

ե) Ե'վ եվրոպական, և' ազգային մակարդակներում անհրաժեշտ է զարգացնել տրամաբանական մոտեցում և ավելի սերտ համագործակցություն՝
– բարձրագույն կրթության հետ, ներառյալ՝ Բոլոնիայի գործընթացի ներքո ենթադրվող զարգացումները.
–Եվրոպական տնտեսական, զբաղվածության, անընդհատ Զարգացման և հասարակական ներգրավման քաղաքականությունների հետ (ուղեցույցների և գործողությունների ազգային ծրագրերի առնչությամբ).
– նախնական գործիքների և ֆոնդերի հետ.
–գիտական հետազոտության, գործնականի և քաղաքականության միջև՝ ցանցեր ստեղծելու և նորարարությունների, քաղաքականության և լավագույն փորձի փոխանակման միջոցով:

զ) Առկա առաջընթացի և ՄԿՈՒ զարգացման հետագա քայլերի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ներգրավելով ազգային մակարդակում համապատասխան շահառուների, պետք է տրամադրվի հարատև կրթության ազգային ռազմավարությունների համատեքստում, որպես, Կրթություն և ուսուցում 2010 միասնական հաշվետվության մի մաս: Այն պետք է ներառի վերոհիշյալ ազգային մակարդակի գերակայությունները և հիմք հանդիսանա՝ վերազգային մակարդակում ոչ միայն մասնակից երկրների, այլ նաև սոցիալական գործընկերների և համապատասխան այլ շահառուների միջև փորձի փոխանակման խթանման համար:

է) Եվրոպական, ազգային, տարածաշրջանային և ոլորտային մակարդակներում անհրաժեշտ է ավելի սերտ կապեր հաստատել սոցիալական գործընկերների հետ՝ հաշվի առնելով ողջ կյանքի ընթացքում կարողությունների և որակավորումների զարգացման համար նրանց գործողությունների շրջանակում սահմանված աշխատանքային գերակայությունները:

ը) Հարատև կրթության ոլորտում Լեոնարդո դա Վինչի և հետագայում գործողությունների միասնական ծրագրի ավելի արդյունավետ և լիարժեք կիրառում, որի նպատակն է՝ աջակցել ՄԿՈՒ բարեփոխումների ընթացքը խթանող նորարարական գործողությունների մշակմանը, փորձարկմանն ու իրականացմանը:

թ) Cedefop-ը և ETF-ը կշարունակելու են խթանել Կոպենհագենյան գործընթացի իրականացումը, դրանց ցանցերի (օրինակ՝ ReferNet, National Observatories) և էլեկտրոնային միջոցների կիրառումը, որոնք կնպաստեն հաշվետվությունների, մոնիտորինգի առաջընթացին, ինչպես նաև փորձի փոխանակմանը, հատկապես՝

- հարատև կրթության ոլորտում որակյալ քաղաքականության և փորձի մասսայականացման,
- ոլորտային գործողությունների ուրվագծման,
- երկկողմանի ուսուցմանն ու վերանայմանն աջակցելու նպատակով՝ Լեոնարդո դա Վինչի ուսումնական այցերի կիրառման միջոցով:

ժ) Երկու տարի անց կկազմակերպվի նախարարների հանդիպում, որի նպատակն է՝ գնահատել իրականացման գործընթացը, Կրթություն և ուսուցում 2010

աշխատանքային ծրագրի շրջանակներում վերանայել ՄԿՈՒ գերակայություններն ու ռազմավարությունները:

---

[i] վերջնականապես ընդունված 2002թ. դեկտեմբերի 19-ին, JO C13, էջ 2-4, 18.1.2003

[ii] Լիսաբոնյան ռազմավարության իրականացման վերաբերյալ Կրթության խորհրդի/Հանձնաժողովի միասնական հաշվետվությունը՝ «Կրթություն և ուսուցում 2010. Լիսաբոնի առանցքային բարեփոխումների հաջողությունը», 2004թ., փետրվար

[iii] 14354/03 EDUC 167 SOC 438, 2003թ., նոյեմբեր

[iv] 9286/04 EDUC 109 SOC 179, 2004թ., մայիս

[v] 9600/04 EDUC 118 SOC 253, 2004թ., մայիս

[vi] 9599/04 EDUC 117 SOC 252, 2004թ., մայիս

[vii] ETUC, UNICE, UEAPME, CEEP, 2002թ., փետրվար

[viii] Լիսաբոնյան նպատակների իրականացում. ՄԿՈՒ-ի ներդրումը, 2004թ., հոկտեմբեր

[ix] Զբաղվածության աշխատանքային խմբի «Աշխատատեղեր, աշխատատեղեր, աշխատատեղեր» հաշվետվություն, 2003թ., նոյեմբեր

[x] Kok-ի բարձր մակարդակի խմբի «Մարտահրավերի դիմակայումը. զարգացման և զբաղվածության Լիսաբոնյան ռազմավարությունը» հաշվետվությունը, որը նվիրված է Լիսաբոնյան ռազմավարությանը, 2004թ., նոյեմբեր

[xi] որոնք համապատասխանում են Միջանկյալ հաշվետվության առաջին և երկրորդ գերակայություններին՝ «բարեփոխումները և ներդրումները կենտրոնացնել գլխավոր ոլորտներում» և «հարատև կրթությունը դարձնել կոնկրետ իրականություն»:

[xii] նախագահական եզրակացություններ – կետ 23.

[xiii] Միասնական միջանկյալ հաշվետվության երրորդ գերակայության համաձայն՝ «Ստեղծել կրթության և ուսուցման Եվրոպա»